ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Անվանի արվեստաբան, գրականագետ և քննադատ Ռուբեն Զարյանը գրական ասպարեզ է իջել երևանյան թվականներին: Այն է եղել նրա հետաքրքրությունների շրջանակը. Նար-Դոս, Վրթանես Փափազյան, Հովհաննես Հովհաննիսյան, Դաբրիել Սունդուկյան, Խաչատուր Աբովյան: Տարբեր են եղել նրա կատարած աշխատանքները. հրապարակումներ, գիտական տեքստեր, հետազոտություններ, քննադատական հոդվածներ սովետահայ գրականության ականավոր դեմքերի մասին (Հովհաննես Շիրազ, Ակսել Բակունց, Դերենիկ Դեմիրճյան):



Ռուբեն Զարյանի գրականագիտական առաջին աշխատանքը եղել է Նար-Դոսի «Աննա Սարոյան» վիպակի առաջաբանը (1933): Այնուհետև նա շարունակում է հետազոտել վիպասանի գրական գործունեության վաղ շրջանը, լուսաբանել կյանքի անհայտ կողմերը: Ավելի խոր և մնայուն էր գրականագետի հավաքչությունը Հովհաննես Հովհաննիսյանով: Նրա մասնակցությամբ սկսվում է բանաստեղծի երկերի առաջին ամբողջական հրատարակությունը. նա է պատրաստում առաջին հատորի տեքստը, գրում ծանոթագրությունները: Նրան է պատկանում առանձին հրատարակված «Հատընտիրի» առաջաբանը (1939): 1938-ից սկսվում է գրականագետի գործունեության այն շրջանը, որ կապված է բացառապես Խաչատուր Աբովյանի անվան հետ: Ռուբեն Զարյանը օգտվեց Աբովյանի՝ հենց նոր բանգարան տեղափոխված արտակարգ հարուստ արխիվից: Հսկայական էր նյութը. դարմ էր նաև հետազոտողի հայացքը: Նա ևս պիտի զար վերազնահատելու Աբովյանին, ազատելու ավանդական պիտակներից: Այնուհետև հրատարակվում է «Վերք Հայաստանին» նրա առաջաբանով: Զարյանի մասնակցությամբ 1939-ին սկսվում է Աբովյանի երկերի հրատարակությունը երեք հատորով: Նրա պրպտումների արդյունքն է լինում մի աշխատություն, որը պետք է նոր խոսք ասեր աբովյանագիտության մեջ. դա «Նախաշավիղի» պատմությանը նվիրված հետազոտությունն էր, որի համար Զարյանը 1946 թ. ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Դրան հետևում են մաքուր ուսումնասիրություններ՝ նվիրված Աբովյանի կյանքի անհայտ կողմերին: Սրանց մի մասը հետագայում ամփոփվում է «Աբովյանի կյանքից նորահայտ էջեր» աշխատության մեջ: Զարյանի սրբովյանական ուսումնասիրությունների պսակն է հանդիսանում մի ոչ մեծ գիրք, որին վիճակված էր լայն ժողովրդականություն: Դա «Աբովյանի կյանքն» էր, հրատարակված 1939 և վերահրատարակված 1940, 1954 թթ., ապա թարգմանված ռուսերեն (Մոսկվա, 1954):

Քառասնական թվականներից նոր շրջան է սկսվում Ռուբեն Զարյանի կյանքում. ընդլայնվում են նրա հետաքրքրությունների շրջանակները, որոնց մեջ են ընդգրկվում արդի թատրոնը, թատերագիտությունը: Անցումը գրական քննադատությունից թատերականին չէր խախտում արվեստագետի հերքին նկարագիրը: Այդ նկարագրի համար բնորոշը գեղագիտականի ընկալումն էր գրականության և արվեստի մեջ: Ե՛վ Հովհաննես Շիրազի «Գարնանամուտի» մասին 1945-ին գրողների տանը կարդացած զեկուցման, և՛ «Համլետը հայկական բեմում» ուսումնասիրության մեջ տեսնում ենք մի քննադատի, որ օժտված է բանաստեղծական խոհի նյությունն ընկալելու, նորն զգալու կարողությամբ:

1948 թ. Երևանի թատերական ինստիտուտում աշխատելով որպես հայ թատրոնի պատմության դասախոս, Ռուբեն Զարյանը գրում է թատրոնի պատմության հետ կապված հոդվածներ, որոնցից մի քանիսը ամփոփվում են «Պայքար ռուս դրամատուրգիայի համար հայ բեմում» ժողովածուի մեջ (1955):

Զբաղվելով թատրոնի պատմությամբ, Զարյանը ներկայի մեջ տեսնում էր դասական բեմարվեստի լավագույն ավանդույթները: Նա ականատես էր դերասանական մի սերնդի, որ կամրջում էր ներկան անցյալի հետ: Այն տասնամյակներին Սունդուկյանի անվան թատրոնը կարող էր պարծենալ իր բարձրատաղանդ արտիստներով, դեռևս կենդանի էին Վ. Փափազյանը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գուլազյանը, Հասմիկը, Հ. Ներսիսյանը, Վ. Վաղարշյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Ջանիբեկյանը:

Զարյանը ծրագրում է թատերական դիմանկարների մի շարք: Լույս է տեսնում, սակայն, միայն առաջին գիրքը (1956), որի մեջ մտնում են Հասմիկը, Օլգա Գուլազյանը և Արուս Ոսկանյանը: Սրան հետևում են նրա երկու մենագրությունները՝ «Սիրանույշը» (1956) և «Աղամյանը» երկու գրքով՝ «Արվեստը» (1960), «Կյանքը» (1961):

Թատերագետ Զարյանը աշխատել է դրսևորել հորագույն հայ թատրոնի առավել իշխող առանձնահատկությունները: Հետազոտողը որոնում է դրանք նախ և առաջ դերասանների արվեստի, նրանց ստեղծագործական ոճի մեջ ինչպես պրոֆեսիոնալ առումով, այնպես էլ գեղագիտական ընդհանուր տեսանկյունով: Երկու տիրապետող գիծ է նա տեսնում մշտապես՝ ազգային առանձնահատկությունը, այն, ինչ մի բեմարվեստ տարբերում է մյուսից և հումանիզմը, ինչ մերձեցնում է միմյանց տարբեր ժողովուրդների արվեստները: Երբ Սիրանույշի գեղագիտական կոդեքսը նյութ է հանդիսանում նրա ձևորիս հիմնավորելու առաջին տենդենցը, ապա Աղամյանով նա ցույց է տալիս հայ արվեստի ալտրուիզմը: Թատերագիտական միջ գործերի էր վիճակված այնպիսի ճանաչում գտնել, ինչպես գտան Ռուբեն Զարյանի այս աշխատությունները: Արվեստի մասին գործերը գրված էին արվեստագետի գրչով: Անցած-գնացած ներկայացումները նորից էին կենդանանում մեր աչքի առաջ, մենք լսում էինք լեգենդ դարձած մեր արտիստներին, համարյա տեսնում նրանց խաղը:

Ռուբեն Զարյանը մեր այն գրականագետ արվեստագետներից է, որոնք հետևողականորեն և նվիրվածությամբ զբաղվում են Շեքսպիրով, շեքսպիրյան կերպարների պրոբլեմով և ավելի լայն առումով՝ Շեքսպիրը և հայ հասարակական միտքը բեմայով: Վերջին քառորդ դարի ընթացքում գրած նրա ուսումնասիրություններն ու հոդվածները չեմ ընդունելություն են գտել ինչպես գրականագետների և արվեստաբանների, նույնպես և լայն հասարակայնության կողմից: Ուսումնասիրություններից առաջինը «Շեքսպիրը և հայերը» ընդարձակ զեկուցումն է, որ նա Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի կապակցությամբ 1965-ի մայիսին կարդացել է Լոնդոնում: Վերանայված ու լրացված՝ այն լույս տեսավ հայերեն, ապա՝ ֆրանսերեն ու անգլերեն: 1976-ին լույս է տեսնում Զարյանի «Շեքսպիրի հետ» ժողովածուն, որի մեջ մտնում են նրա ուսումնասիրությունները Պետրոս Ադամյանի, Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Վաղարշ Վաղարշյանի, Խորեն Աբրահամյանի և այլոց ստեղծած շեքսպիրյան կերպարների մասին: Անգլիական դրամատուրգին նվիրված նրա բոլոր աշխատությունները ամփոփվում են «Էջեր հայ շեքսպիրապատումից» ընդհանուր խորագիր կրող ժողովածուի մեջ, որի առաջին գիրքը լույս է տեսել ընթացիկ տարում: Նկատի ունենալով Զարյանի վաստակը շեքսպիրագիտության բնագավառում, Վայմարում նրան ընտրում են գերմանական շեքսպիրյան ընկերության պատվավոր անդամ:

1958 թ. Զարյանը ղեկավարում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, որն այժմ ընդգրկում է նարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, ժողովրդական երաժշտության, թատրոնի, հեռուստատեսության ու կինոյի և կիրառական արվեստի բաժինները: Զարյանի նախաձեռնությամբ ինստիտուտում կազմակերպվեց շեքսպիրյան գրադարան և շեքսպիրագիտության հայկական կենտրոն, որը զգալի գործ է կատարել Շեքսպիրի և հայ կուլտուրայի ու թատրոնի կապերն ու առնչությունները ուսումնասիրելու ուղղությամբ:

Եթե այս ամբողջ վաստակին ավելացնենք նաև Զարյանի երկհատոր հուշերը մեր ժամանակի ականավոր արվեստագետների ու գրողների մասին, մոտավորապես ընդգրկած կլինենք նրա բազմաբնույթ գործունեության սահմանները:

Բանասիր. գիտ. դոկտոր Ն. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ